ՀՈԳԵԾՆՈՐՀ ՄԱՇՏՈՑ ԱՐԵՂԱ ԹԱՋԻՐՅԱՆ

Մաշտոց արեղա Թաջիրյանը ծնվել է 1895 թվականի դեկտեմբերի 24-ին, Թյուրքիայի Կեսարիա քաղաքի Կերմիր (Կարմիր) գյուղաքաղաքում։ Նրա աշխարհական անունը եղել է Դավիթ։

Իր նախնական կրթությունը ստացել է ծննդավայրի Պարթևյան վարժարանում։ 1912 թվին աշակերտել է Կեսարիայի Ս. Կարապետ վանքի Ճեմարանին և 1915 թվին փայլուն կերպով ավարտել նրա դասընթացը։

1915—1918 թվականներին, տարագրության օրերին, աքսորվել է և հրաշքով ազատվելով մահից, անցել է Եվրոպա և Փարիզում հետևել իրավաբանության և պատմության ֆակուլտետներին և մասնագիտացել Մերձավոր Արևելքի ժողովուրդների պատմության մեջ։

Աշխատակցել է մի շարք թերթերի և ժուռնալների։ Ապա բնակություն հաստատելով Բեյրութում (Լիբանան), մասնակցել է ազգային-հասարակական կյանքի։

Հայրենիք վերադառնալով 1947 թվին, աշխատակցել է Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի «Տեղեկագրին»։

Հոգևորականության կոչում զգալով իր մեջը, սույն թվականի օգոստոսին դիմել է Ս. Էջմիածնի Գերագույն Հոգևոր Խորհրդին՝ կուսակրոն քահանա ձեռանդրվելով Մայր Աթոռի միաբան դառնալու համար։ Գերագույն Հոգևոր Խորհրդի կարգադրությամբ սույն թվականի սեպտեմբերի 7-ին և 8-ին, Ս. Գայանեի տաճարում, ձեռամբ Մայր Տաճարի ավագ լուսարար գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանի, ընդունել է եկեղեցական առաջին չորս աստիճանների հետ միասին սարկավագության աստիճանը։ Սեպտեմբերի 10-ին, Ս. Հռիփսիմեի տաճարում, ձեռնադրվել է կուսակրոն քահանա՝ Մաշտոց վերանվանմամբ։ Ձեռնադրության, ինչպես և վեղարի տվչության հանդիսավոր արարողությունները կատարվել են ձեռամբ Տ. Սահակ եպիսկոպոսի և ներկայությամբ հոծ հավատացյալների։

Հոգեշնորհ Տ. Մաշտոց արեղա Թաջիրյանը, սույն թվականի հոկտեմբերի 7-ին, Ազգային-եկեղեցական ժողովի կողմից ընտրվեց վանքի վերատուգիչ հանձնախմբի անդամ։